պէս չուռ դառած որ ոսկին երեւայ, գլխի վրայ դնելով կը մտնէ Մուստաֆա փաշայի մօտ։ Մուստաֆան տեսնելով ոսկին, կը հարցնէ. Այդ ի՞նչ է. Ձեր– պարտէզի հասոյթի գինը, որով կարող էք գնել այնտեղէն ստացած բերքի տասնապատիկ աւելին։ Ձեր իրաւունքը ձեզ բերի և հպատակութեան իրաւունք-ջուրը իրենց թողի։ Պէօր Մուստաֆան որ այսպիսի գլխաւորներու մէջ անուանական մի կառավարիչ էր և պատժելու անկարողութեան մատնուած, մի պարսկական շալ ժամանակի սովորութեան համաձայն խալաթ (պարգեւ) կու տայ։ Խօջա—Մարխասեանը ըստ սովորութեան՝ յարգանքի նշան խալաթը, գլուխին կապելու փոխարէն, դուրս ելած ժամանակ, կը կապէ պորտին, լուր կու տան Պէօր Մուստաֆա փաշային, թէ քո խալաթը անարգելու համար Խօջա—Մարխասեանը պորտին կապեց։ Նորա կը կանչէ անոր՝ բացատրութիւն պահանջելու. Խօջա—Մարխասեանը կը պատասխանէ.— Նախ ինձ հարկաւոր է պորտ պնդացնել որ անղէն չընկնի (կը նշանակէ ուժեղ մնալ)։ Պէօր Մուստաֆան շալ մը եւս կու տայ Խալաթ, որ նա կապէ գլխին։ Այսպէս կառավարիչները իրենց կոխոտող Վանկուլիներին պատժելու փոխարէն, անոնցմէ վախնալով կը վարձատրէին։ (*)

(*) Դեռ վերջին ժամանակներս Վանի հռչակաւոր Պօղոս եպիսկոպոս առաջնորդի ժամանակ՝ որի օրով ծագեցան Պօղոս Ալպօղոս կուսակցութիւնները կամ Լուսաւորեալ, Խաւարեալ. (Պօղոսեանները կը կոչուէին Խաւարեալ, իսկ Ալպօղոսեանները Լուսաւորեալ). Քիւրդերը կառավարութեան հետ ոեւէ գործ ունեցած ժամանակ, Վանի Առաջնորդին կը դիմէին և անոր իրաւասութեան միջոցաւ եթէ յանցաւոր լինէին՝ կը յանձնուէին, և կամ բողոք ու պահանջ ունեցած ժամանակ՝ բողոքնին ու պահանջնին կը ներկայացնէին, յանձնուելով Հայերու պաշտպանութեան ու ճանաչելով հայկական իրաւասութիւնը՝ անոր կու տային տեսակ մը հաշտարար դատաւորի դեր իրենց և կառավարութեան միջեւ։ Մոկսի մէջ այժմ ալ Քիւրդ բէգերու կնոջ ընտրութիւնը չի կրնար կատարուիլ առանց Հայ ժողովուրդի հաւանութեան, մինչև որ բէգի իրաւասութեան տակ